ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ (XVI-XVIII ԴԴ.)

ԳՈՌ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արևելյան Վրաստանում երկրի ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական կյանքում կարևոր դիրք էր զբաղեցնում վրաց եկեղեցին: Եկեղեցին կարևոր դեր էր խաղում կենտրոնաձիգ պետության կայացման գործում, ինչը կարևորում էին վրաց գահակալները և ամեն կերպ աջակցում եկեղեցուն: Սակայն հոգևոր իշխանության դերի բարձրացումը, եկեղեցու մասնակցությունը երկրի քաղաքական անցուդարձին հաճախ հանգեցնում էին աշխարհիկ և հոգևոր իշխանությունների շահերի բախմանը: XVI դ. երկրորդ կեսին՝ Իրանի գերիշխանության տակ անցնելուց հետո, կարևորվում են նաև եկեղեցու և Իրանի շահերի փոխհարաբերությունները: Առանձին քննության խնդիրներ են Քարթլիի և Կախեթի թագավորների, Իրանի շահերի և վրաց եկեղեցու փոխհարաբերությունները, Արևելյան Վրաստանի քաղաքական կյանքում եկեղեցու դերը և գործառույթները:

Եկեղեցին և աշխարհիկ իշխանությունը դաշնակիցներ

Կենտրոնաձիգ պետության դիրքերի ամրապնդմանն ուղղված հոգևոր իշխանության ջանքերի, եկեղեցու և Քարթլիի գահակալների համերաշխ համագործակցության շրջան կարելի է առանձնացնել XVI դարը: Դարասկզբից սկսած՝ նկատելի են եկեղեցու ջանքերը Սամցխեն և Կախեթը Մցխեթի կաթողիկոսության ազդեցության գոտում պահելու ձգտումը: Դա կարևոր նշանակություն ուներ Արևելյան Վրաստանի քաղաքական մասնատվածության պայմաններում, քանի որ եկեղեցին միավորում էր Քարթլին, Կախեթը և Սամցխեի աթաբեկությունը մեկ հոգևոր իշխանության ներքո: Այսպես, Դորոթեոզ կաթողիկոսը (1503-1505, 1511-1516 թթ.) փորձում էր խափանել Մցխեթի կաթողիկոսության ազդեցությունից Սամցխեն դուրս բերելու աթաբեկ Մզեճաբուկի փորձերը: Հակառակ այն հանգամանքին, որ Դորոթեոզ II-ը Սամցխեում արդեն եպիսկոպոս էր նշանակել ազգությամբ հույն Սիմեոնին, Մզեճաբուկը Անտիոքի պատրիարք Դորոթեոզի թույլտվությամբ լիազորվում է այդուհետ

Սամցխեի եպիսկոպոսի հետ միասին եպիսկոպոսներ ձեռնադրելու[1]: Ի վերջո, Դորոթեոզի ջանքերը պսակվում են հաջողությամբ, Մզեճաբուկը հեռացվում է իշխանությունից և Իակով անվամբ հոգևորական ձեռնադրվում, իսկ 1518 թ.-ից հետո Բասիլ կաթողիկոսի օրոք Սամցխեն կրկին ընդգրկվում է Մցխեթի իշխանությունների սահմաններում[2], ինչի վկայությունը գտնում ենք Ջավախքում գտնվող Կումուրդոյի եպիսկոպոս Զոսիմեի՝ կաթողիկոս Բասիլին տրված հավատարմության նամակից[3]: Ապա 1553 թ. Բասիլ կաթողիկոսին դիմում է աթաբեկ Մանուչարը և իր կալվածքները հետ ստանալու պայմանով խոստանում վերադարձնել կաթողիկոսությանը պատկանած Սամցխեի կալվածքները[4]:

XVI դ. կեսերին Մցխեթի հոգևոր աթոռից կախվածությունն այս անգամ փորձում է թոթափել Կախեթը: Սակայն Մցխեթի կաթողիկոսությանը Կախեթում ևս հաջողվում է պահպանել իր դիրքերը, ինչի մասին վկայում են Կախեթի եպիսկոպոսների կողմից 1556-1560 թթ. Դոմենտի կաթողիկոսին, ապա 1562-1588 թթ. Նիկոլայոս կաթողիկոսին տրված հավատարմության գրերը[5]:

Քարթլիի գահակալները, մասնավորապես Լուարսաբ I (1530-1556 թթ.) և Սիմոն I (1556-1568, 1579-1601 թթ.) արքաները, իրենց հերթին աջակցում էին եկեղեցուն, նոր կալվածքներ շնորհում, վերահաստատում եկեղեցու հին կալվածագրերն ու ապահարկում նրա կալվածքները. 1559 թ. Սիմոն թագավորի հրովարտակով ապահարկվում են կաթողիկոսական կալվածքները[6], 1530 թ. Լուարսաբ արքան նորոգում է Քվատախեվիի վանքի, իսկ[7] 1540 թ. Սիոնի վանքի կալվածքների ապահարկման հրովարտակը[8], 1557 թ. Սիմոն արքան կալվածքներ է նվիրում Մցխեթի կաթողիկոսությանը[9]: Նույնիսկ իսլամադավան թագավորները շարունակում էին աջակցել եկեղեցուն: Ռուսաստանում 1687 թ. Քարթլիի Գեորգի XI (Շահ Նավազ խան, 1677-1688 թթ.)

---

[1] ქართული სამართლის ძეგლები, ტ. III, ტექსტები გამოსცა, შენიშვნები და საძიებლები დაურთო ი. დოლიძე, თბილისი, 1970, გვ. 240-241 (K^{h}art^{h}uli samart^{h}lis dzeglebi, ed. I. Dolidze, T^{h}bilisi, 1970).

[2] Նույն տեղում, էջ 251:

[3] Նույն տեղում, էջ 251-252:

[4] **Д. Пурцеладзе**, Грузинские церковные гуджары (грамоты), Тифлис, 1881, стр. 107.

[5] ქართული სამართლის ძეგლები, նշվ. աշխ., էջ 268, 343, 351:

[6] Նույն տեղում, էջ 263-268:

[7] Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոն (այսուհետ՝ ՎՁԱԿ), ֆոնդ HD, վավերագիր 1372:

[8] ՎՁԱԿ, ֆոնդ HD, վավերագիր 1373:

[9] ՎՁԱԿ, ֆոնդ HD, վավերագիր 1557:

թագավորի պատվիրակության առաջնորդ արքիմանդրիտ Լավրենտին վկայում է, որ Գեորգին, չնայած մուսուլման լինելուն, շարունակում է աջակցել վրաց եկեղեցուն, նոր եկեղեցիներ է կառուցում, քրիստոնյաներին մուսուլմաններից պաշտպանում և նույնիսկ գաղտնի քրիստոնեություն է դավանում[10]: Վրաց արքաներն աջակցում էին եկեղեցուն նաև վանքապատկան կալվածքների հետ կապված հարցերը՝ հարկահավաքության իրականացում, անհնազանդությունները, եկեղեցու ունեցվածքի նկատմամբ ոտնձգությունները պատժելու և նմանատիպ այլ խնդիրներ լուծելու մեջ[11]: Պորտահիտի վանքի հոգևորական Գրիգորիի բողոքից հետո Հերակլ II-ի 1775 թ. հրամանով Կիզիկի մոուրավը պատժելու էր վանականի մատնացույց արած անհնազանդ ճորտերին՝ հօգուտ վանքի գանձելով նրանց ունեցվածքը[12]: 1799 թ. Գեորգի XII-ը հրամայում է Թելեթի եկեղեցու վանահորը երկու օրվա ընթացքում վերադարձնել նույն եկեղեցու եկամուտներից սեփականած գումարները՝ հակառակ դեպքում սպառնալով դատել նրան արքայական դատարանով, և նույն տարում թագավորը հրամայում է Գորիի մուորավին Գորի քաղաքից և նրա շրջակայքի բնակավայրերի կաթողիկոսի 3 կոդ ցորենով հարկը ճորտերից գանձել և բերել Թիֆլիս[13]: Եկեղեցուն ցուցաբերած վրաց արքաների օժանդակության մասին է վկայում օտար դավանանքների դեմ պայքարում նրանց ներդրումը: Այսպես, Կախեթի Թեյմուրազ II (1737-1744 թթ.) թագավորը վտարում է կաթոլիկ միսիոներներին Կախեթից, նրանց եկեղեցին և տունը հանձնում Սամթավիի արքեպիսկոպոս Կիրիլին[14]:

Կախեթի գահակալների հատուկ ուշադրության կենտրոնում է եղել Ռուսթավիի եպիսկոպոսությունը: Այս փաստի վկայությունը գտնում ենք Կախեթի արքա Դավիթ II-ի (Իմամ Կուլի խան, 1703-1722 թթ.) գուշարից՝ հրովարտակից, որտեղ նա ներկայացնում է և՛ պատմությունը, և՛ եպիսկոպոսության տնտեսական դրությունը՝ կալվածքները, կախյալ անձանց, և՛ նրա զբաղեցրած տեղն ու դերը արքունիքում և աշխարհիկ գործերում[15]: Դավիթ II-ը

---

[10] **Пайчадзе Г.** Материалы по русско-грузинским отношениям (80-90-е годы XVII века), т. III, Тбилиси, 1979, стр. 21.

[11] **Багатуров С.** Личные и поземельные права в древней Грузии, выпуск 1, Тифлис, 1886, стр. 27.

[12] **Пурцеладзе Д.** Грузинские крестьянские грамоты, крепостные и судебные акты, грамоты и письма грузинских и персидских царственных особ, Тифлис, 1882, стр. 27.

[13] **Пурцеладзе Д.** նշվ. աշխ., էջ 72-73.

[14] **Пурцеладзе Д**. Грузинские церковные гуджары (грамоты), Тифлис, 1881, стр. 51.

[15] **Пурцеладзе Д**. նշվ. աշխ., էջ 1-6.

իր հրովարտակում Ռուսթավիի թեմի մանրամասն նկարագրությունից զատ ընդգծում է Կախեթի Ալեքսանդր I (1476-1511 թթ.), Լևան (1520-1574 թթ.) և Թեյմուրազ (1606-1616, 1625-1633, 1634-1648 թթ. եղել է Կախեթի, իսկ 1629-1633 թթ.՝ նաև Քարթլիի թագավոր[16]) թագավորների բարյացակամ վերաբերմունքը: Թեյմուրազը եպիսկոպոսությունը վերածել էր միտրոպոլության, թեմի առաջնորդին՝ Նիկոլոզ Չերքեզիշվիլիին[17], շնորհել զորքերի գլխավոր հրամանատարի (სპასპეტი) կոչումը, հանձնել դրոշը (დროშა), նշանակել նրան մուրավ իրեն ենթակա տարածքներում և իրավունք տվել՝ նստելու ձախ կողմից արքայի կողքին: Հրովարտակի մեջ ակնհայտ է արքայի՝ Դավիթ II-ի դժգոհությունը Մցխեթի կաթողիկոսությունից, որը սեփականել էր թեմի կալվածքներից Լիլո[18], Գլդանի և Ջաչվի գյուղերը[19]:

XVIII դ. կեսերին Արևելյան Վրաստանը թևակոխում է քաղաքական լուրջ տեղաշարժերի շրջան: Սկսվում է Իրանից Քարթլիի և Կախեթի փաստացի անկախացման շրջանը. 1744 թ. Թեյմուրազը և Հերակլը Նադիրից որպես քրիստոնյա թագադրվելու իրավունք են ստանում, 1748 թ. Հերակլը, Նադիր շահի մահից հետո անկախանալով, նույնիսկ դադարում է Իրանին հարկատու լինելուց, սկիզբ է դրվում նաև անկախ դրամահատությանը[20]: Ահա այս նոր քաղաքական պայմաններում կաթողիկոս Անտոնի (Թեյմուրազ) Բագրատիոնիին վիճակված էր կարևոր դեր խաղալ Արևելյան Վրաստանի ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական կյանքում, դառնալ Հերակլ II-ի աջակիցն ու համախոհը: Կաթողիկոսի և Հերակլի համագործակցության մի մասն էր կազմում Վրաստանի հասարակական-քաղաքական զարգացման ծրագրի մշակումը, որը պիտի իրագործվեր հարևան պետությունների և ժողովուրդների հետ սերտ համագործակցության մթնոլորտում[21]: Կաթողիկոսը և նրա համա-

---

[16] **Гребельский П., Думин С.** и др., Дворянские роды Российской империи. Князья Царства Грузинского, т. IV, Москва, 1998, стр. 67.

[17] **Цулая Г.** Из грузино-абхазской антропонимии, Этнографическое обозрение. № 1, Москва, 1999. стр. 121-125.

[18] Պարզ չէ, թե խոսքը որ Լիլոյի մասին է, քանի որ կային Մեծ և Փոքր Լիլո բնակավայրեր: Հավանաբար վեճը Փոքր Լիլոյի մասին է, քանի որ այն ծառայում էր Թիֆլիսի միտրոպոլիտներին որպես ամառանոց: **Иосселиани П.** Путевые записки по Кахетии, Тифлис, 1846, стр. 8.

19 **Пурцеладзе Д.** Грузинские церковные гуджары (грамоты), стр. 4.

[20] **Пагава И.** Восточно-грузинское царство и гянджинское ханство, Эпиграфика Востока, XXX, Москва, 2013, стр. 201-242.

[21] **Рогава А.** Зачатки капитализма в Грузии и политика Ираклия II, Тбилиси, 1974, стр. 63.

խոհները XVIII դ. երկրորդ կեսին Վրաստանի տնտեսական զարգացման համար որոշում են կիրառել եվրոպական փորձը[22]: Հերակլը կարևորում էր նրա դերը[23] և Քարթլին ու Կախեթը միավորելուց հետո վերահաստատում է Անտոնին կաթողիկոսի պաշտոնում: XVIII դ. վերջին քառորդում Քարթլի-Կախեթի միացյալ թագավորության արքա Հերակլ II-ը որդեգրել էր ռուսական կողմնորոշում՝ Ռուսաստանի հովանավորության տակ մտնելով ազատվել վրացական հողերի վրա իրենց գերիշխանությունը հաստատելու Իրանի և Օսմանյան կայսրության նկրտումներից, Կովկասի լեռնականներից Վրաստանը պաշտպանելու, երկրի տնտեսական վիճակը բարելավելու և կայունացնելու համար[24]: Այս նախաձեռնության մեջ ևս կարևոր դեր ուներ Անտոն կաթողիկոսը, մասնավորապես Եկատերինա II-ին նա էր ներկայացրել իր նամակում այն պայմանները, համաձայն որոնց Հերակլը ընդունելու էր Ռուսաստանի հովանավորությունը[25]: Բացի այն, որ ըստ ներկայացված պայմանների, Հերակլը և իշխող Բագրատիոնի հարստությունը պիտի շարունակեին գահակալել, ճիշտ է ռուսական գերիշխանության ներքո, պիտի պահպանվեր նաև կաթողիկոսի պաշտոնը[26]:

Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների տարաձայնությունները

Սակայն միշտ չէ, որ հոգևոր և աշխարհիկ իշխանությունները գործում էին համերաշխ դաշնակցությամբ, հաճախ տեղի ունեցող շահերի բախումների արդյունքում տեղի էին ունենում քաղաքական լուրջ տեղաշարժեր, պաշտոնանկություններ, դավադրություններ և այլն: XVI դ. սկզբին Քարթլիում գահ բարձրացավ Դավիթ X-ը (1505-1525 թթ.), որի իշխանության ընթացքը նշանավորվեց Արևելյան Վրաստանի մեկ միասնական թագավորություն ստեղծելու նրա փորձերով: Դավիթ X-ը իր եղբայր Բագրատին տալիս է Մուխրանի վրա իշխելու իրավունքը և շահում նրա աջակցությունը Կախեթի Ավ-Գեորգի

---

[22] Նույն տեղում, էջ 177-179:

[23] **Талиашвили Г., Шадури В.,** Ломоносов и грузинская культура. Роль и значение литературы XVIII века в истории русской культуры, Москва-Ленинград, 1966, стр. 116-126.

[24] **Маркова О.** Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, Наука, 1966, стр. 166, **Ватейшвили Дж**. Грузия и европейские страны, т. III, Грузия и Россия XVIII-XIX века, Москва, Наука, стр. 243, ა. სურგულაძე, რუსეთთან საქართველოს შეერთების პროგრესული შედაგები, თბილისი, 1982, გვ. 44 (A. Surguladze, rusetʰtʰan sakʰartʰvelos sheertʰebis progresuli shedagebi, Tʰbilisi, 1982).

[25] **Цагарели А.** Грамоты и другие исторические документы XVIII столетия, т. I, С. Петербург, 1891, стр. 329-332.

[26] **Цагарели А.** Грамоты и другие исторические документы XVIII столетия, т. II, вып. I, С. Петербург, 1898, стр. 90-92.

(1511-1513 թթ.) թագավորի դեմ պայքարում, որը Բագրատը կատարեց հաջողությամբ՝ 1513 թ. Ձալիսիի մոտ ձերբակալելով և Քսանի ամրոցում բանտարկելով Գեորգիին, որտեղ էլ վերջինս մահացավ[27]: Դավիթը փորձում է Կախեթը միացնել իր թագավորությանը: Նրա զորքերը գրավում են Կախեթը, սակայն Կախեթի մանկահասակ գահաժառանգ Լևանին (1520-1574 թթ.) հաջողվում է թաքնվել մորեղբոր՝ Գարսևան Չոլոկաշվիլիի մոտ: 1520 թ. Դավիթը, կարգավորելով հարաբերությունները Իրանի շահ Իսմայիլի հետ, նորից հարձակվում է Կախեթի վրա և պաշարում Լևանին Մաղարի ամրոցում: Ծանր պաշարումից հետո Դավիթը արքեպիսկոպոսին[28] և Բագրատին ուղարկում է բանակցելու և համոզելու Լևանին հանձնվել[29]: Սակայն արքեպիսկոպոսը հայտնում է Լևանի մորը, որ, կապված սուլթան Սելիմի զորքերից սպառնացող մոտալուտ վտանգի հետ[30], Դավիթը շուտով դադարեցնելու է պաշարումը, և կոչ է անում չհանձնվել[31]: Արքեպիսկոպոսը այս քայլով ոչ միայն հակառակվում է արքայական հրամանին, այլև իրականում տապալում է Դավիթի՝ միասնական պետություն ստեղծելու ծրագրերը, խոչընդոտում Արևելյան Վրաստանի վերամիավորումը: Իսլամադավան Սիմոն II-ի (1619-1629 թթ.) կառավարման օրոք ուժգնանում են հալածանքները եկեղեցու նկատմամբ. սպանվում է Թբիլիսիի միտրոպոլիտ Կիրակոսը, իսկ նրա հաջորդը՝ Բառնաբան, ստիպված էր թաքնվել Ծինարեխում, որտեղ և մնաց մինչև Սիմոնի մահը[32]: 1632 թ. Քարթլիում վալիի՝ փոխարքայի[33] կարգավիճակով իշխանության է գալիս

---

[27] Դավիթ X-ը իր եղբայր Բագրատին տալիս է Մոխրանի վրա իշխելու իրավունքը և շահում նրա աջակցությունը Կախեթի Ավ-Գեորգի (1511-1513 թթ.) թագավորի դեմ պայքարելու համար, որը Բագրատը կատարեց հաջողությամբ՝ 1513 թ. Ձալիսիի մոտ ձերբակալելով և Քսանի ամրոցում բանտարկելով Գեորգիին, որտեղ էլ վերջինս մահացավ: Տե՛ս **Вахушти Багратиони**, История царства грузинского, пер. Н. Накашидзе, Тбилиси, 1976, стр. 29, 297 (Vaxušti Bagrationi, Istorija carstva gruzinkowo, trans. N. Nakašidze, Tbilisi, 1976).

[28] Ցավոք, չհաջողվեց պարզել, թե ով էր այդ ժամանակ արքեպիսկոպոս-Գ. Մ.:

[29] **Вахушти Багратиони**, նշվ. աշխ., էջ 28-31:

[30] **Маргиев З**. Батум во времена Османской империи (краткий административный и исторический обзор г. Батуми и региона в составе Османской империи), Батуми, 2008, стр. 67.

[31] **Вахушти Багратиони**, նշվ. աշխ., էջ 28-31:

[32] **Иосселиани П.** Исторический взгляд на состояние Грузии под властью царей-магометан, Тифлис, 1849. стр. 35.

[33] Հարկ է նշել, որ այս շրջանում Քարթլիի և Կախեթի Բագրատիոնի գահակալներին միայն վերապահումով կարելի է անվանել թագավոր, քանի որ նրանք, ճիշտ է, գահին նշանակվում էին նույն Բագրատիոնի հարստությունից, բայց իրանական կողմից

Ռոստոմը[34] (1632-1658թթ.)՝ Իրանի շահ Սեֆի Ի-ի (1623-1642 թթ.) մտերիմը և դրածոն Քարթլիի գահին[35]: Ռոստոմի և եկեղեցու նկատմամբ նրա վարած քաղաքականության վերաբերյալ տեղեկությունները հակասական են: Մի կողմից Ռոստոմը ներկայացված է որպես խելացի և փորձված կառավարիչ, ով, լինելով մուսուլման, եկեղեցու, լեզվի ավանդույթների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք էր ցուցաբերում և առավելապես մտահոգված էր երկրի տնտեսական վիճակի կայունացմամբ, իսկ նրա քրիստոնյա կնոջ՝ Մարիամի ջանքերով եկեղեցիներ էին վերականգնվում[36]: Ռոստոմի օրոք Արևելյան Վրաստանում հարաբերական խաղաղություն հաստատվեց[37]: Մյուս կողմից Ռոստոմը մեղադրվում է Վրաստանում «*իրանականացման*»՝ իրանական մշակույթի, լեզվի, իսլամի տարածմանը[38] նպաստող քաղաքականության մեջ[39]: Բարդ փոխհարաբերություններ էին ձևավորվել նաև Ռոստոմի և կաթողիկոսի՝ Էվդեմոզ Դիասամիձեի միջև: Ռոստոմի իշխանության գալուց հետո Քարթլիի նախկին թագավորը՝ Թեյմուրազը, փախել և ապաստան էր գտել Իմերեթում, ապա 1634 թ. գրավել Կախեթի գահը[40]: Ռոստոմի քաղաքականությունից և իշխանությունից դժգոհ Քարթլիում ձևավորված ընդդիմության

ճանաչվում էին վալիներ, իսկ թուրքական աղբյուրները նրանց, մասնավորապես Թեյմուրազ Ի-ին և Ռոստոմին անվանում են խաներ: **Эвлия Челеби,** Книга путешествий, вып. 3, Земли Закавказья и сопредельных областей Малой Азии и Ирана, Ф. Алиев, А. Желтяков, М. Зулалян, Г. Путуридзе, Москва, 1983, стр. 8-13.

[34] Ռոստոմը Սիմոն Ի-ի եղբոր՝ Դավիթ Հ-ի (Դաուդ խան 1569-1578 թթ.) որդին էր և գահ էր բարձրացել Ռոստոմ Սաակաձեի օգնությամբ: Տե՛ս **Маградзе Э.** Стенание или жизнь Давида Гурамишвили, Тбилиси, 1980, стр. 35.

[35] **Кутелия Т.** Грузия и Сефевидский Иран (по данным нумизматики), Тбилиси, 1979, стр. 52.

[36] Путешествия русских послов XVI-XVII вв. (статейные списки), отв. ред. Д.Лихачев, Москва-Ленинград, 1954, стр. 421.

[37] **Ronald Grigor Sunny**, The making of the Georgian nation, Indiana Univ. Press., 1994, p. 53.

[38] Իսլամի տարածումը Արևելյան Վրաստանում մակերեսային բնույթ էր կրում, քանի որ հավատափոխության դեպքերը քիչ էին և սահմանափակվում էին վերնախավի մի քանի ներկայացուցիչների կողմից առերես իսլամի ընդունմամբ: **R. Floor, E. Herzig**, Iran And The World In The Safavid Age, London, 2012, p. 495-496.

[39] **Месхиа Ш., Цинцинадзе Я**. Из истории русско-грузинских взаимоотношений. X–XVII вв. Тбилиси, 1958, стр. 84**, Н. Накашидзе**, Грузино-русские политические отношения в первой половине XVII века, Тбилиси, 1968, стр. 120.

[40] История Грузии, ч. 1, под. ред. Джанашиа С., Тбилиси, 1946, стр. 368.

մեջ էր նաև կաթողիկոսը[41], ով Թեյմուրազի համախոհներից էր: Ռոստոմի դեմ դավադրություն է կազմակերպվում[42], որին մասնակցում էր նաև կաթողիկոսը: Դավադրությունը բացահայտվում է, Ռոստոմը հաշվեհարդար է տեսնում կազմակերպիչների, այդ թվում և կաթողիկոսի հետ, ում նախ բանտարկում է, ապա մահապատժի ենթարկում և նոր կաթողիկոս է նշանակում Քրիստափոր Ուրդուբեգիշվիլիին[43]: Այս դեպքից հետո արդեն հոգևոր իշխանությանը որպես Ռոստոմին դեմ գործող ուժ չենք տեսնում, ավելին, 1645 թ. եկեղեցու առաջնորդները որպես հաշտարար հանդես են գալիս Թեյմուրազին և Ռոստոմին հաշտեցնելու համար[44]: Չնայած հոգևոր իշխանության դեմ ձեռնարկված կտրուկ միջոցներին՝ Ռոստոմը գիտակցում էր եկեղեցու և նրա առաջնորդների դերը, և նա ևս կալվածքներ էր նվիրում եկեղեցուն, մասնավորապես Սվետիցխովելիին է նվիրում Մոխիսի և Գոգեթի գյուղերը[45]:

1703 թ. Վախթանգ VI–ը եկեղեցական ժողով է հրավիրում, պաշտոնանկ անում Հերակլ I-ի նշանակած կաթողիկոսին՝ Էվդեմոզ II Դիասամիձեին (1700-1703 թթ.), և նոր կաթողիկոս նշանակում իր եղբորը՝ Դոմենտի IV-ին (1704-1725, 1739-1741 թթ.), որը եղբոր համախոհն ու նրա վարած քաղաքականության ջատագովն էր[46]: 1722 թ. Սեֆյան հարստության անկումից և աֆղանների կողմից մայրաքաղաք Սպահանը գրավելուց հետո Իրանը գտնվում էր անիշխանության և քաոսային վիճակում[47]: Առիթից օգտվելով՝ Օսմանյան Թուրքիան փորձում է իր հսկողության տակ վերցնել Արևելյան Վրաստանը և 1723 թ.[48] թուրքական զորքերը գրավում են Թիֆլիսը[49]: Թուրքական օկուպացիայից հետո Վրաստանում սկսվում է թուրքական գերիշխանության 12-ամյա

---

[41] ქართლის ცხოვრება, ტექსტი დადგენილი ყველა ძირითადი ხელნაწერის მიხედვით ს. ყაუხჩიშვილის მიერტ. IV, თბილისი, 1973, გ. 441-442, (K^{h}artlis tsxovreba, ed. S. Q'auxc^{v}ishvili, Tbilisi, 1973).

[42] **Накашидзе Н.** նշվ. աշխ., էջ 120:

[43] **Вахушти Багратиони**, նշվ. աշխ., էջ 66-67:

[44] Парижская хроника, пер. Г. Аласания, Тбилиси, 1991, стр. 66 (Parižskaja xronika, trans. G. Alasania, Tbilisi, 1991).

[45] **Гагошидзе Ю.** Из истории грузино-иранских взаимоотношений (Храм II-I вв. до н.э. Дедоплис Миндори), Кавказ и Средняя Азия в древности и средневековье, ред. Б. Литвинский, Москва, 1981, стр. 102-116.

[46] **Маградзе Э**. նշվ. աշխ., էջ 38:

[47] **Ismael T., Ismael J.** Governement and Politics of the Contemporary Middle East, New York, 2012, p. 120.

[48] **Faroqhi S.** The Ottoman Empire and the World Around it, London, 2006, p. 55.

[49] **Sykes P.** A History of Persia, volume II, London, 1915, p. 237.

(1723-1735 թթ.[50]) շրջանը, որը հայտնի է օսմանլոբա անվանմամբ[51]: Այս ընթացքում ուշադրության են արժանի վերոհիշյալ կաթողիկոսի ջանքերը Արևելյան Վրաստանի կարգավիճակը բարելավելու համար: Դրա համար նա ուղևորվում է Կոստանդնուպոլիս, ձեռք բերում սուլթան Ահմեդ III-ի (1703-1730 թթ.) երաշխիքները՝ իր հովվության անվտանգության, Վրաստանի կարգավիճակը բարելավելու համար[52]:

Իրանի շահերի և Մցխեթի կաթողիկոսների փոխհարաբերությունները

XVI դ. երկրորդ կեսին՝ 1555 թ. Ամասիայում կնքված թուրք-իրանական հաշտության պայմանագրից հետո, Արևելյան Վրաստանը հայտնվել էր Իրանի գերիշխանության ներքո[53]: Այս շրջանում առանձին քննության խնդիր է Իրանի շահերի և Մցխեթի կաթողիկոսների փոխհարաբերությունների ուսումնասիրությունը: Շահ Աբասի (1587-1629 թթ.) գահակալությունը նշանավորվեց Քարթլիի և Կախեթի դեմ ձեռնարկված մի շարք պատժիչ արշավանքներով, որից հատկապես տուժեց Կախեթը[54]: 1614 թ. արշավանքի ժամանակ շահի զորքերը Կախեթում սրի քաշեցին Էրցո, Թիանեթի, Մարտկոբի, Ուջարմայի, Սագարեջոյի բնակչությանը, ավերածություններ գործեցին Ալավերդու վանքում, պղծեցին, ավերեցին և թալանեցին մի շարք այլ վանքեր[55]: 1614 թ. արշավանքից հետո՝ 1615 թ., Կախեթում և Քարթլիում բռնկվեց հակաիրանական

---

[50] **Маркова О.** Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966, стр. 120.

[51] **R. Grigor Sunny**, նշվ. աշխ., էջ 54:

[52] **Пайчадзе Г.** Русско-грузинские политические отношения в первой половине XVIII века, Тбилиси, 1970, стр. 70, **Абуладзе Ц.,** Османские грамоты в древнехранилищах Тбилиси, Тюркологический сборник, Москва, 1984, стр. 4-15.

[53] Այդ պայմանագրով Արևելյան Վրաստանը՝ Քարթլին, Կախեթը և Սամցխեն, անցել էին Իրանի, իսկ Արևմտյան Վրաստանը՝ Իմերեթի թագավորությունը, մեգրելական և գուրիական իշխանությունները՝ Օսմանյան կայսրության գերիշխանության տակ: Տե՛ս **Ватейшвили Дж.** Грузия и европейские страны, Грузия и Россия (XVIII-XIX вв.), т. III, Москва, 2006, стр. 43, **Svanidze M.** The Amasya peace treaty between the Ottoman Empire and Iran and Georgia, საქართველოს მეცნიერებათა ეროვნული აკადემიის მოამბე, ტ. III, 2009 № 1, გვ. 191-198.

[54] **Малик Шах-Хусайн Систани**, Хроника воскрешения царей, пер. Л. Смирнова, Москва, 2000, стр. 312-314 (Malik Shah-Husajn Sistani, Xronika voskreshenija carej, trans. L. Smirnova, Moskva, 2000).

[55] Парижская хроника, նշվ. աշխ., էջ 52-54:

խոշոր ապստամբություն[56]: Պատասխան պատժիչ արշավանքի ժամանակ շահը արյունոտ հաշվեհարդար տեսավ կախեթական հոգևորականության հետ: Զատկի գիշերը Դավիթ-Գարեջիի վանական համալիրում 6000 վանականների կազմակերպած ջահերով ծիսակատարությունը շահի հրամանով վերածվեց սպանդի[57]: Այդ արշավանքների ընթացքում շահի զորքերի գործած վայրագությունների արդյունքում բազմաթիվ վանքեր ամայացան, նվազեցին հոգևորականության թիվը և եկեղեցու դերը երկրի կյանքում[58]: 1666 թ. Շահ Աբաս II-ի մահից հետո գահ է բարձրանում շահ Սուլեյմանը կամ Սեֆի II-ը (1666-1694 թթ.): Սուլեյմանը շահերից առաջինն էր, որ միջամտեց վրաց եկեղեցու գործերին: Շահի հետաքրքրությունը վրաց եկեղեցու առաջնորդների և նրանց դերի նկատմամբ պատահական չէր: Գեորգի XI-ը, 1676 թ. գահ բարձրանալով, կաթողիկոս էր նշանակել Նիկոլոզ Ամիլախորին[59] և, բնականաբար, իր ձեռնարկումների մեջ օգտվելու էր դրածո կաթողիկոսի օժանդակությունից: Անհնազանդ Գեորգի XI-ին (Շահնավազ խան, 1676-1688, 1703-1709 թթ.) Քարթլիի գահից զրկելուց և Հերակլ I-ին (1688-1703 թթ.) գահ բարձրացնելուց հետո շահը պաշտոնանկ է անում նաև կաթողիկոս Նիկոլայ Ամիլախորիին և նոր կաթողիկոս է նշանակում Իոանն Դիասամիձեին[60]: Այս դեպքի հետ կապված պահպանվել է նաև շահի հրովարտակը, որտեղ Սուլեյմանը հրամայում է Քարթլիի իշխաններին, ազնվականներին և բնակիչներին հարգել և հնազանդվել Հերակլին՝ Նազար Ալի խանին: Ապա հայտնում է, որ քանի որ կաթողիկոսը (Նիկոլայ VII) չի ներկայացել նորանշանակ թագավորին և դրանով անարգել է նրան, պաշտոնանկ է արվում[61]: Նրա փոխարեն կաթողիկոս է նշանակվում Իոանը[62]: Կաթողիկոսի ընտրության հարցում շահերի

---

[56] **Берадзе Г., Смирнова Л.** Материлы по истории ирано-грузинских взаимоотношений в начале XVII века (Сведения «Ихйа ал-мулук» о Грузии), Тбилиси, 1988, стр. 73.

[57] **Муравьев А.** Грузия и Армения, ч. 1, Санкт-Петербург, 1848, стр. 82-84.

[58] **Кирион Еп.** Заслуги грузинского монашества и монастырей для отечественной церкви и общества, Тифлис, 1899, стр. 48.

[59] **Вахушти Багратиони**, նշվ. աշխ., էջ 77:

[60] Парижская хроника, նշվ. աշխ., էջ 84:

[61] Тбилисская коллекция персидских фирманов, М. Тодуа, Кутаиси, 1970, т. I, стр. 86-87 (Tbilisskaja kollekcija persidskix firmanov, ed. M. Todua, Kutaisi, 1970).

[62] Ըստ Վախուշտի Բագրատիոնիի հաղորդած տեղեկության՝ Իոանն Դիասամիձեին կաթողիկոս էր նշանակել ոչ թե շահ Սուլեյմանը, այլ Հերակլ I-ը, ով նշանակել էր նաև նոր եպիսկոպոսների՝ արքեպիսկոպոս Նացվլիշվիլիին, Դոմենտի Կապլանիշվիլիին (Թբիլիսիի եպիսկոպոս), Իոսիֆ Ջավախիշվիլիին (Մանգլիսի եպիսկոպոս): Տե՛ս **Вахушти Багратиони**, նշվ. աշխ., էջ 81:

միջամտությունն առկա էր ինչպես վրաց, այնպես էլ հայոց եկեղեցու դեպքում: Այսպես, շահ Սեֆի Ի-ը (1629 – 1642 թթ.) 1629 թ. Էջմիածնի կաթողիկոս է նշանակում Մովսես վարդապետին. «այլ և ետու զիրաման կաթուղիկոսութեան Մովսէսի վարդապետին ըստ հայցուածոյ ամենայն ազգին Հայոց»[63]: XVII դ. առաջին կեսից սկսած՝ փոփոխություններ են նկատվում Մցխեթի կաթողիկոսության և Իրանի շահերի փոխհարաբերություններում: Այսպես, շահ Սեֆի Ի-ը 1642 թ. կաթողիկոսին[64] ուղղված շնորհակալական նամակում գոհություն է հայտնում ուղարկված գինու և բազեների համար, որով կաթողիկոսն արտահայտել էր իր «անսահման նվիրվածությունն ու հավատարմությունը շահին»[65], ինչից հետևում է, որ այդ պահին արդեն կաթողիկոսը նման ձևով հարկատու էր շահին: Վրաց եկեղեցու հարկատու լինելը հաստատվում է նաև Սիոնի ավագերեց Աթանասի կողմից 1740 թ. կազմված վանքի ունեցվածքի ցուցակի տեղեկությամբ այն մասին, որ վանքապատկան կալվածքների համար հօգուտ շահի գանձվել են 103 թուման, 4 մինալթուն և 1 աբասի[66]: Սեֆյան Իրանի հարկային լուծը ընկած էր և՛ վրաց, և՛ հայոց եկեղեցու վրա[67]: XVIII դ. սկզբից սկսած, ինչպես նաև Իրանում Նադիր շահի իշխանության ժամանակ ևս, կաթողիկոս-շահ փոխհարաբերությունները բարձրանում են նոր մակարդակի վրա: Այլևս կաթողիկոս նշանակելու իրավունքը պատկանում էր շահերին, շահերը պետական հարցերի վերաբերյալ նամակագրություն ունեին կաթողիկոսների հետ, կաթողիկոսներն իրենց հերթին շահին դիտում էին որպես իրենց կալվածքների և իրավունքների պաշտպանի, շահերն ավելի ու ավելի շատ էին միջամտում եկեղեցու կյանքին և, հակառակը, Քարթլիի և Կախեթի «թագավորները» կորցնում էին եկեղեցու վրա ունեցած ազդեցությունը: Այսպես, 1701 թ. շահ Հուսեին Ի-ը (1694-1722 թթ.) կաթողիկոս է նշանակում Հերակլ Ի-ի մորեղբոր որդուն՝ Էվդեմոզ II Դիասամիձեին (1700-1705 թթ.),

---

[63] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 311 (Patmut'yun Arak'el vardapeti Davrižec'voy, Vałaršapat, 1896):

[64] Հրովարտակում կաթողիկոսի անունը նշված չէ, հավանաբար խոսքը Քրիստափոր II Ուրդուբեգիշվիլիի մասին է, քանի որ 1642 թ. Էվդեմոզ I Դիասամիձեն մահապատժի էր ենթարկվել Ռոստոմի դեմ գործելու համար: **Вардосанидзе С.** Грузинская православная церковь, Православная энциклопедия, т. 13, Москва, 2011, стр. 191-229.

[65] Тбилисская коллекция ..., т. I, стр. 44.

[66] **Пурцеладзе Д.** Грузинские церковные гуджары (грамоты), Тифлис, 1881, стр. 64.

[67] Ի տարբերություն Մցխեթի կաթողիկոսության՝ Մովսես վարդապետի և ջուղայեցի խոջա Նազարի ջանքերով Սեֆի Ի-ը ազատեց Էջմիածնի կաթողիկոսությունը «մուղադա» հարկից, որը գանձվում էր 100 թումանի չափով: Տե՛ս Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, էջ 310:

հրամայում թավադներին, ազնաուրներին և մնացյալ բնակչությանը ճանաչել և հարգել իր նշանակած կաթողիկոսին[68]: Սերտ հարաբերություններ էին հաստատվել շահ Հուսեինի և Էվդեմոզին փոխարինած Դոմենտի IV (1705-1741 թթ.) կաթողիկոսի միջև[69]: 1705 թ. շահի հրամանով Թբիլիսիի բաղնիքը որպես վակֆ հանձնվում է կաթողիկոսին[70]: 1708 թ. շահ Հուսեինի ֆիրմանով Քարթլիում և Կախեթում եկեղեցու կալվածքների նկատմամբ ոտնձգությունների կատարման մասին Դոմենտի կաթողիկոսի բողոքից հետո արգելվում է որևէ մեկին օգտվել վանքապատկան հողերից, Քարթլիի վալիին (Գեորգի XI) և նրա նաիբին (տեղապահ)՝ Վախթանգին, հրամայվում է, որ անձամբ կալվածքները հանձնեն եկեղեցուն և հետևեն Կախեթում դրանց ապահովությանը[71]: Ուշագրավ է նաև Հուսեինի՝ 1713 թ. ֆիրմանը[72], որտեղ շահը հրամայում է Վախթանգին կաթողիկոսին վերադարձնել վանքապատկան կալվածքները: Այս հրովարտակը արժեքավոր տեղեկություն է պարունակում այն մասին, որ կաթողիկոսը հաշվետու էր շահին և պարտավոր էր զեկուցել նրան, ինչպես նաև պարտավոր էր փիշքաշ՝ նվեր, մատուցել նրան, որը մեկ անգամ ևս հաստատում է շահին եկեղեցու հարկատու լինելը: Շահի և եկեղեցու փոխհարաբերությունները նույն ձևով ներկայանում են Նադիր շահի իշխանության տարիներին: Նադիրը հրահանգներ է տալիս կաթողիկոսին՝ վերջինիս կատարած զեկուցումների հիման վրա[73], նշանակում նոր կաթողիկոսների, ռոճիկ նշանակում: Նադիրը 1742 թ. կաթողիկոս է հաստատում Թեյմուրազ II-ի (1744-1762 թթ. Քարթլիի թագավոր) և Քարթլիի մեծատոհմիկների կողմից կաթողիկոս ընտրված Նիկոլոզին[74]: Նադիր շահի օրոք կաթողիկոսի համար ռոճիկ է սահմանվում: Շահի հրամանով 1000 նադիրի[75] ռոճիկ էր սահմանված Նիկոլո-

---

[68] Тбилисская коллекция ..., т. I, стр. 111.

[69] Դոմենտին կաթողիկոս էր ընտրվել Քարթլիում Գեորգիի տեղապահ Վախթանգի կողմից 1705 թ. հրավիրված եկեղեցական ժողովում: Տե՛ս საქართველოს ისტორიის ნარკვევები, რედ. მ. დუმბაძე, ტ IV, თბილისი, 1973, გვ. 400 (Sak^{h}art^{h}velos ist'oriis narq'evevebi, ed. M. Dumbadze, Tbilisi, 1973).

[70] Նույն տեղում, էջ 120:

[71] Նույն տեղում, էջ 127-128:

[72] Тбилисская коллекция ..., т. I, стр. 148.

[73] Նույն տեղում, էջ 167-168:

[74] Նույն տեղում, էջ 152:

[75] Իրանական արծաթադրամ: **Капанадзе Д.,** Грузинская нумизматика, Москва, 1955, стр. 184.

զին և նույնքան 1745 թ. նոր կաթողիկոսին՝ Անտոն I-ին[76]: Նադիրին հաջորդած Իբրահիմը փորձում էր կաթողիկոսի հետ լավ հարաբերություններ պահպանել և 1749 թ. կաթողիկոսին հավատարիմ ծառայության համար գոհունակություն հայտնելով նրան հագուստ և հատուկ շնորհակալություն է հայտնում[77]: Վրաց եկեղեցին վերջին անգամ Իրանի շահերի թշնամական քաղաքականության զոհ է դառնում Աղա Մուհամմադ խանի՝ 1795 թ. Վրաստան կատարած արշավանքի ժամանակ: Ռուս-վրացական քաղաքական մերձեցումը պատրվակ դարձնելով և փորձելով Իրանի տիրապետությունը վերահաստատել Վրաստանում՝ Աղա Մուհամմադ խանի զորքերը ներխուժում են Վրաստան[78]: Նրանք գրավում են և գրեթե հիմնահատակ ավերում Թբիլիսին[79], թալանում և պղծում եկեղեցիներն ու վանքերը, հայ և վրացի հոգևորականների մի մասին էլ խեղդամահ անում Կուրի ջրերում[80]:

Հոգևոր իշխանության վերնախավը՝ կաթողիկոսը և եպիսկոպոսները, կարևոր դեր էին խաղում դիվանագիտական բանակցությունների, պատվիրակությունների ընդունման և դեսպանական առաքելությունների իրականացման հարցում: Ռոստոմ թագավորը կաթողիկոսին, եպիսկոպոսներին հանձնարարել էր իշխանների հետ մասնակցել Խորեշան թագուհու ընդունելությանը, պատվով ընդունել թագուհուն, որից հետո միայն Ռոստոմը պիտի ընդուներ թագուհուն[81]: XVII դ. առաջին կեսին Մոսկվայում հոգևորականներ էին գլխավորում Կախեթի Թեյմուրազ I (1606-1648 թթ.) թագավորի 3 պատվիրակությունները[82]: 1688 թ. Արչիլ II-ին Վրաստան վերադարձնելու դեսպանական հանձնարարականն էր կատարում արքիմանդրիտ Լավրենտին[83]: 1752 թ. Ռու-

---

[76] Тбилисская коллекция ..., т. I, стр. 152, 190-191.

[77] Նույն տեղում, էջ 199:

[78] **Анчабадзе Ю., Волкова Н.** Старый Тбилиси, Москва, 1990, стр. 15.

[79] Записки Сергея Алексеевича Тучкова (1766-1808), ред. К. Военский, С.-Петербург, 1908, стр. 186.

[80] **Кикодзе Г.** Ираклий Второй (1720-1798), пер. А.Жардиашвили, Тбилиси, 1945, стр. 74.

[81] Парсадан Горгиджанидзе, пер. Р. Кикнадзе, В. Путуридзе, Тбилиси, 1990, стр. 111 (Parsadan Gorgijanidze, trans. P. Kiknadze, V. Puturidze, Tbilisi, 1990).

[82] Առաջին պատվիրակությունը 1618-1621 թթ. գլխավորում էր վանահայր Խարիտոնը, 1624 թ.՝ արքեպիսկոպոս Թեոդոսին, իսկ 1635-1637 թթ. դեսպանությունը՝ միտրոպոլիտ Նիկիփորը: Տե՛ս **Полиевктов М.** Материалы по истории грузино-русских взаимоотношений 1615-1640 гг. (посольства Веревкина, Харитона, Феодосия, Никифора, Гегенева и Волконского), ТГУ, Тбилиси, 1937, стр. 37, 63, 102.

[83] **Зергинадзе Г.** Эпизоды из жизни царя Арчила II, Труды Тбилисского государственного университета, № 266, Тбилиси, 1986, стр. 88.

սաստանում Հերակլ II-ի և Թեյմուրազ II-ի անունից ռուսական կողմից օգնություն ստանալու հանձնարարականով դեսպանական առաքելություն էին իրականացնում Աթանաս Թբիլելին և Սիմոն Մաղաշվիլին[84]: Եկեղեցին ուներ նաև դատական իրավասություններ: Պետական դատական մարմինների կողքին գործում էին եկեղեցական դատարանները: Եկեղեցու դատարանով էին քննվում սպանությունների, սեռական, ընտանեկան, կրոնական բնույթի հանցանքների դատավարությունները: Առանձին հիմնարկություն էր կաթողիկոսի դատարանը, որի դատին ենթակա էին բոլոր հոգևորականները, վանական ճորտերը, եկեղեցու ազնվականները[85]: Բացի կաթողիկոսական դատարանից, կային նաև տեղական, ավելի նեղ իրավասություններով եկեղեցական դատարաններ[86]: Եկեղեցին կարող էր միջամտել անգամ թագավորական տան ամուսնություններին: 1605/1606 թթ. Թեյմուրազ թագավորը խնդրում է Քարթլիի Լուարսաբ II-ի[87] (1606-1615 թթ.) քրոջ՝ Խորեշանի ձեռքը և հանդիպում հոգևորականների առարկությանը, քանի որ Խորեշանը և Թեյմուրազը ազգականներ էին[88]: Եվ միայն կաթողիկոսի և եպիսկոպոսների խորհրդակցությունից և հավանությունից հետո Թեյմուրազը կարողանում է ամուսնանալ Խորեշանի հետ[89]:

---

[84] **Զոբանյան Պ.**, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981, էջ 35:

[85] **Пурцеладзе Д.** Грузинские крестьянские грамоты, крепостные и судебные акты, грамоты и письма грузинских и персидских царственных особ, Тифлис, 1882, стр. 9.

[86] **Сургуладзе И.** История государства и права Грузии, Тбилиси, 1968, стр. 77, 107-108.

[87] Լուարսաբ II-ը 1614 թ. Շահ Աբասի կողմից գերեվարվում, ապա մահապատժի է ենթարկվում իսլամ չընդունելու պատճառով: Դասված է վրաց եկեղեցու սրբերի շարքում: Տե՛ս ა. ჯაფარიძე, წმინდა მოწამე ქეთევან დედოფალი, წმინდა მეფე ლუარსაბ II, მეფე თეიმურაზის ბრძოლა ქართველობისათვის, თბილისი, 1996, გვ. 30 (A. ǯapʰaridze, C'minda moc'ame Kʰetʰevan dedopʰali, c'minda mepʰe Luarsab II, mepʰe Tʰeimurazis brdzola kʰartʰvelobisatʰvis, Tʰbilisi,1996).

[88] Ըստ մեկ այլ տեսակետի՝ Թեյմուրազի և Խորեշանի ամուսնությունը Շահ Աբասի մտահղացումն էր: Իմանալով, որ Թեյմուրազը և Խորեշանը մերձավոր ազգականներ են, շահը որոշել էր ստիպել Թեյմուրազին ամուսնանալ ազգականուհու հետ՝ հակառակ եկեղեցու և քրիստոնեական դավանանքի արգելքի: Դրանով, հնարավոր է, շահը նպատակ էր հետապնդում Թեյմուրազի կողմից հրամանը չկատարելու դեպքում հաշվեհարդար տեսնել նրա հետ: Տե՛ս **Сабинин Г.** Полное жизнеописание святых грузинской церкви, ч. 2, С. Петербург, 1873, стр. 39-40.

[89] Парижская хроника, стр. 44.

ԱՄՓՈՓՈՒՄ

Ուշ միջնադարում Արևելյան Վրաստանում վրաց եկեղեցին հանդես էր գալիս որպես քաղաքական լուրջ ուժ, ուներ դատական, վարչական իրավասություններ և ուներ բավական մեծ ինքնուրույնություն: XVI-XVIII դդ. վրաց եկեղեցին հարաբերությունները կառուցում էր մի կողմից տեղական գահակալների, մյուս կողմից Իրանի շահերի հետ: Կարևորելով վրաց եկեղեցու դերն ու նշանակությունը՝ աշխարհիկ իշխանությունն աջակցում և հովանավորում էր եկեղեցուն, սակայն երբեմն էլ ծագած տարաձայնությունները հանգեցնում էին այս ուժերի միջև լուրջ ընդհարումների:

Բանալի բառեր - Արևելյան Վրաստան, Մցխեթի կաթողիկոսություն, Իրան, վրաց եկեղեցի, աշխարհիկ իշխանություն:

ВЗАИМООТНОШЕНИЯ МЕЖДУ ЦЕРКОВНЫМИ И СВЕТСКИМИ ВЛАСТЯМИ В ВОСТОЧНОЙ ГРУЗИИ (XVI - XVIII ВВ.)

ГОР МАРКАРЯН

В Восточной Грузии церковь всегда играла важную роль в культурной, политической и экономической жизни страны. В XVI-XVIII вв. церковь в лице Мцхетского католикосата строила свои отношения не только с местными царями, но и с шахами Ирана, поскольку во второй половине XVI века Восточная Грузия (Картли, Кахетия) оказалась под властью Ирана. Светская власть (местные правители, шахи Ирана) осознавала роль и значение церкви и поддерживала ее, но в некоторых случаях разногласия между светскими и духовными властями приводили к серьезным конфликтам, которые в большинстве случаев решались в пользу светской власти.

Ключевые слова - Восточная Грузия, церковь, шах, Иран, Картли, Кахетия.

CHURCH-STATE RELATIONSHIP IN EASTERN GEORGIA (XVI - XVIII CENTURIES)

GOR MARGARYAN

In late Middle Ages, the church in Eastern Georgia was a serious political power. It had juridicial, administrative rights and a high degree of freedom. In the XVI-XVIII centuries the georgian church (Catholicose of Mtskhet') had built its relations not only with the local rulers, but with the shahs of Iran as well. Giving much importance to the role and significance of the church, the secular authorities had supported and sponsored the church. However, sometimes certain disagreements between the secular and the spiritual authorities had led to serious confrontationss.

Key words - Eastern Georgia, Catholicose of Mtskheta, The church of Georgia, seculiar authorities, Iran.